ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/116

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.08.2018թ. թիվ 03/26-3/14192-18 գրությամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00861057) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 02.08.2018թ. թիվ 07ԱԿ/14/4277-18 գրության հիման վրա, 06.08.2018թ. նախաձեռնել է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.08.2018թ. թիվ 07ԱԿ/14/4277-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կարիքների համար համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով ս/թ հուլիսի 13-ին հրապարակվել է ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցության հայտ են ներակայացրել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն և «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ ներկայացված ցածր գնային առաջարկով 1-ին տեղ է զբաղեցրել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, որը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային պարտավորություն՝ 34105 (երեսունչորս հազար հարյուր հինգ) ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է իր կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով Ձեզ ենք ներկայացնում «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները համապատասխան հիմքերով»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Լիլիթ Ադոնցը:

3. <u>«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն 17.08.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

« Գործի նախապատմությունը և փաստերը.

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կարիքների համար (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Համակարգչային սարքերի» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 25.07.2018թ.տրվել է եզրակացություն, համաձայն որի «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն 19.07.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ /34.105 ՀՀ դրամ/:

Ընթացակարգի 27.07.2018թ. ժամը 10:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության «ա» կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն 19.07.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 34.105 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և

5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն 19.07.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 34,105 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի մոտ 34.105 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը գոյացել է 17.07.2018թ. կատարված ճշգրտման արդյունքում:

Այնուհետև տեղեկանալով առաջացած տույժի մասին՝ 18.07.2018թ. Ընկերությունը միասնական հաշիվ է վճարել 1.570.000 ՀՀ դրամ, որպեսզի մարվեն՝

1-10.07.2018թ. ներկայացված հունիս ամսվա եկամտահարկի մարումները,

2-17.07.2018թ. ճշգրտման արդյունքում առաջացած տույժը:

Սակայն, 18.07.2018թ. մարվել է 261,733 ՀՀ դրամ /2018թ. հունիս ամսվա եկամտային հարկ/, այնուհետև սկսել մարել նաև 2018թ. հունիս ամսվա ԱԱՀ-ի մի մասը՝ 1.238.266 ՀՀ դրամ և 70.000 ՀՀ դրամ/որի վերջնաժամկետը լրանում է 20.07.2018թ.-ին/:

Ընկերությունը պարզելով, որ 18.07.2018թ. անհասկանալի պատճառներով չի մարվել տույժը, այլ մարվել է 2018թ. հունիս ամսվա ԱԱՀ-ի մի մասը՝ չնայած այն հանգամանքի, որ դեռևս Ընկերությունը չէր նախատեսել ԱԱՀ-ի վճարումները, այնուամենայնիվ 19.07.2018թ. Ընկերության հաշվից վճարվել է նաև 9.570.000 ՀՀ դրամ:

Հայտը ներկայացնելուց հետո պարզվել է, որ հայտը ներկայացնելու օրը, այն է՝ 19.07.2018թ. վճարված 9.570.000 ՀՀ դրամը մուտքագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի միսանական հաշվին միայն՝ 20.07.2018թ.-ին և տույժի մարումը նույնպես կատարվել է՝ 20.07.2018թ.:

Արդյունքում 20.07.2018թ. մարվել է ԱԱՀ-ի գծով մնացորդ 8.292.295 ՀՀ դրամը, տույժը 34.105 ՀՀ դրամ /համապատասխանաբար՝ 12,557 ՀՀ դրամ, 5,343 ՀՀ դրամ, 11,415 ՀՀ դրամ, 4,79 ՀՀ դրամ/ և դեռ արդյունքում հաշվում առկա էր 1.243.597 ՀՀ դրամ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն «Էվոկաբանկ» ՓԲԸ-ում բացված իր հաշիվներից՝ 19.07.2018թ. /հայտը ներկայացնելու օր/ արդեն իսկ վճարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունների վճարը /անդորրագիրը կցվում է/, սակայն անհասկանալի պատճառներով միասնական հաշիվներին երևացել է միայն 20.07.2018թ.:

Ստացվում է մի իրավիճակ, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը կատարել է նաև հարկային պարտավորությունների մասով իր պարտականությունները, որը սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համակարգի թերացման հետևանքով հաշիվներից մարվել է միայն 20.07.2018թ., այնուհետև, երբ Պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ստացվել է պատասխան, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն /19.07.2018թ./ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 34,105 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Եթե նույնիսկ հաշվի առնենք այն հանգամանքը, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը, որը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, մեր կարծիքով, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում ենք, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ամփոփելով վերոնշված փաստերն ու փաստական հանգամանքները գտնում ենք, որ Ընկերության կողմից կատարվել են հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարում, սակայն հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում երևացել է 20.07.2018թ., այսինքն այս պարագայում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը մեր կարծիքով չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարատավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք, հետևաբար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր նույնպես առկա չեն:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նմանատիպ կարծիք է հայտնել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իր ՍՑ-ԷՍ-2018/86 որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2018թ. թիվ 03/26-3/14192-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 02.08.2018թ. թիվ 07ԱԿ/14/4277-18 գրությունը, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին 17.08.2018թ. ներկայացրած գրությունը, «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.07.2018թ. նիստի թիվ 2 և 27.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 02.07.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 242,550 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության 6-րդ կետի 2-րդ ենթակետով Հանձնաժողովը որոշել է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին ճանաչել Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ոչպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գին ներկայացրած մասնակից:

Հանձնաժողովը նույն արձանագրության 6-րդ կետի 3-րդ ենթակետով որոշել է նաև, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 19.07.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 34,105 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

2018թ. հուլիսի 27-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ, Հանձնաժողովը՝ արձանագրելով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու օրվա ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը, որոշել է մերժել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.15 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող

ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 7.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 7.15-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Նույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի

34,105 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը գոյացել է 17.07.2018թ. կատարված ճշգրտման արդյունքում՝ որպես տույժ: Տեղեկանալով առաջացած տույժի մասին, Ընկերությունը 18.07.2018թ. հարկերի միասնական հաշվին վճարել է 1,570.000 ՀՀ դրամ, հունիս ամսվա եկամտահարկի և 17.07.2018թ. ճշգրտման արդյունքում առաջացած տույժի մարման նպատակով: Սակայն հաշվին առկա գումրից 18.07.2018թ. մարվել է 2018թ. հունիս ամսվա եկամտային հարկը՝ 261,733 ՀՀ դրամի չափով, այնուհետև՝ նաև 2018թ. հունիս ամսվա ԱԱՀ-ի (որի վճարման վերջնաժամկետը լրանում է 20.07.2018թ.) մի մասը՝ 1,238,266 ՀՀ դրամի և 70,000 ՀՀ դրամի չափով: Պարզելով, որ 18.07.2018թ. անհասկանալի պատճառներով չի մարվել առկա տույժը, այլ մարվել է 2018թ. հունիս ամսվա ԱԱՀ-ի մի մասը՝ չնայած այն հանգամանքի, որ Ընկերությունը դեռևս չէր նախատեսել ԱԱՀ-ի վճարումները, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն 19.07.2018թ. հարկերի միասնական հաշվին վճարել է ևս 9,570,000 ՀՀ դրամ: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելուց հետո պարզվել է, որ հայտը ներկայացնելու օրը՝ 19.07.2018թ. վճարված 9,570,000 ՀՀ դրամը մուտքագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի միսանական հաշվին միայն 20.07.2018թ., ինչի արդյունքում տույժի մարումը ևս կատարվել է 20.07.2018թ.: Այդպիսով, 20.07.2018թ. մարվել է ԱԱՀ-ի գծով մնացորդը՝ 8,292,295 ՀՀ դրամը, տույժը՝ 34,105 ՀՀ դրամ (համապատասխանաբար՝ 12,557 ՀՀ դրամ, 5,343 ՀՀ դրամ, 11,415 ՀՀ դրամ, 4,79 ՀՀ դրամ): Ընկերության ներկայացուցիչը եզրակացրեց, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը կատարել է իր հարկային պարտավորությունները, սակայն դրանք ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համակարգի աշխատանքի առանձնահատկություններով պայմանավորված՝ հաշիվներից մարվել է միայն 20.07.2018թ.:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 19.07.2018թ. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԻ-ի միջոցով՝ ԱԱՀ-ի գծով պարտավորությունների կատարման նպատակով, Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին (900008000490) փոխանցված 9,570,000 ՀՀ դրամի թիվ 2978 բյուջետային փոխանցման վճարման անդորրագիրը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 31.07.2018թ. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային

գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 19.07.2018թ. դրությամբ ունեցել է 8,326,400 ՀՀ դրամի չափով (8,292,295 ՀՀ դրամի չափով՝ ԱԱՀ-ի գծով և 34,105 ՀՀ դրամի չափով՝ տույժի գումար) հարկային պարտավորություն:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 31.07.2018թ. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 20.07.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորոթյուն չի ունեցել, իսկ վերջինիս հաշվում առկա դեբետային մնացորդը կազմել է 1,243,597 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 19.07.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 34,105 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

-Ընկերության կողմից 19.07.2018թ. տույժի (ժամկետանց պարտավորություն) մարման և ԱԱՀ-ի գծով պարտավորությունների կատարման նպատակով, հարկերի միասնական հաշվին վճարվել է 9,570,000 ՀՀ դրամ:

- Ընկերությունը 20.07.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորոթյուն չի ունեցել, այլ ունեցել է դեբետային մնացորդ՝ 1,243,597 ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով, որ հայտը ներկայացնելու օրը՝ 19.07.2018թ. Ընկերության կողմից կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումը, սակայն հարկերի միասնական հաշվին հաշվեգրված միջոցներից հարկային պարտավորությունների մարումը կատարվել է միայն 20.07.2018թ., այսինքն, ավելի ուշ, քան Ընկերության կողմից վճարում կատարելը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքներում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների անբարեխիղճ կատարման արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության հայտը մերժելով և վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով լիազորված մարմնին «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով

ներկայացնելով՝ գործել է իրավաչափ՝ ապահովելով Կարգի 44-րդ և 45-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2018թ. թիվ 03/26-3/14192-18 գրությամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00861057) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ